№ 151 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19 **1899** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19 № 151

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

2 Kreuzer

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակի» գինն է, սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը ՉՈՐՍ ռուբլի. մէկ ամսվանը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն չորս ամսվայ համար 2 դոլլար, Եւրոպայի բաժանորդները—10 ֆրանկ:

Կարդալ ուզող քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Բայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառական ներկայացումների զարգացումը. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կոմսուհի Բօժէնը.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

—

«Մշակի» մէջ տպված թղթակցութիւններից և լուրերից մեր ընթերցողները անշուշտ նկատել են, որ այժմ թատրոնական ներկայացումները մուտք են գործել մեր երկրի զանազան մասերը և յաճախ ամենախուլ անկիւնները: Բնորոշ է մի հանգամանք, որ այդ ներկայացումների մի խոշոր թիւ տեղի ունի ոչ թէ ձմեռը, երբ առհասարակ տրվում են ներկայացումներ, այլ ամառը: Դրա պատճառը հասկանալի է: Մի կողմից այն դերասանները, որոնք ձմեռը զբաղված են Թիֆլիսում կամ Բագուում ներկայացումներով, ամառը գալուն պէս ցրվում են մեր քաղաքները, մեծ գիւղերը և ամարանոցները և խմբելով իրանց շուրջը տեղական սիրողներին, տալիս են մի շարք ներկայացումներ: Միւս կողմից ամարանոց գնացած հասարակութեան մէջ միշտ գտնվում են անձինք, որոնք թէ բարեգործական որ և է նպատակի համար և թէ օգտակար կերպով ժամանակ անցկացնելու դիտումով կազմակերպում են մի քանի ներկայացումներ ամառվայ ընթացքում:

Գաւառական այդ բոլոր ներկայացումները օգտվում են այն թատրոնական պաշարից, որ պատրաստվել և ամբարվել է կենտրոնական քաղաքներում, գլխաւորապէս Թիֆլիսում, իսկ վերջին երկու տարին և Բագուում: Մեր հնացած և մաշված պիեսներից չատերը դեռ ունեն մի յայտնի աստիճանի հետաքրքրութիւն գաւառներում և այն պատճառով նրանք ծնում են այնտեղի հասարակութեան մէջ խօսակցութիւն և վէճ, որոնք կորցրել են մեծ քաղաքներում իրանց նշանակութիւնը: Այդպիսով գաւառական թատրոնական ներկայացումների միջոցով տարածվում և ժողովրդականանում է մեր գոյութիւն ունեցող բեպերտուարը:

Այդ լաւ է. բայց մի և նոյն ժամանակ հարց է ծագում, թէ ինչ պէտք է անել այդ բեպերտուարը թարմացնելու և հարստացնելու համար: Թիֆլիսի նման տեղում հասարակութիւնը արդէն կորցրել է հետաքրքրութիւն դէպի հայոց թատրոնը մասամբ այն պատճառով, որ թատրոնական բեպերտուարի մէջ ոչինչ նորութիւն չը կայ և տարիների ընթացքում չէ աւելանում նոր պիէս: Շուտով նոյն դրութեան մէջ կը լինեն և մեր գաւառները: Հայկական բեպերտուարը շատ սահմանափակ է և նրան սպառել դժուար չէ մի երկու տարում: Այնուհետև մնում է դարձեալ դիմել կրկնութիւնների, որոնք կարող են աջողութիւն ունենալ միայն այն ժամանակ, երբ աչքի ընկնող դերասանական ոյժեր են նրանց ձեռնարկում և ներկայացումների հետաքրքրութիւնը կենտրոնացած է կատարողների առանձնայատկութիւնների վրա:

Գաւառական ներկայացումների աջողութիւնը, որ ինքն ըստ ինքեան մի շատ մխիթարական երևոյթ է, իր կողմից մի որոշ դեր կարող է կատարել մեր ընդհանուր թատրոնական գործի հաստատվելու և ամրանալու խնդրում: Մեր կենտրոններում հայ թատրոնը դեռ հաստատ կազմակերպութիւն չունի, մեր դերասանները դեռ ապահով վիճակի մէջ լինելուց հեռու են. թատրոն յաճախող մեր հասարակութիւնը դեռ փոքրաթիւ է և անհաստատ: Իսկ միացնելով մեր կենտրոնների հասարակութեանը գաւառական հասարակութիւնը՝ մենք կը ստանանք յաճախորդների մի այնպիսի թիւ, որ արդէն կարող է փոքր ի շատէ բաւարար լինել: Մեր դերասանները, ճանապարհորդելով գաւառներում, կը լրացնեն նիւթական ապահովութեան պակասը, որ այժմ զգացվում է:

Շատ ցանկալի էր, որ կենտրոնները կարողանային այնպէս կազմակերպել թատրոնական գործը, որ դերասանները կարողանային ապահովել իրանց, առանց ուրիշ տեղ դիմելու: Բայց դա առ այժմ միայն ցանկութիւն է մնում: Բագուն, ճիշդ է, ահա երկու տարի է, որ կարողանում է զոհաբերութիւն անելով պահել թատրոն, բայց նա դեռ չէ կազմակերպել գործը այնպիսի հիմունքների վրա, որ թատրոնի գոյութիւնը ապահովված լինէր նոյն իսկ մի քանի տարով: Այնտեղ իւրաքանչիւր սեզօնը շատ-շատ կարող է մի պայմանական խոստում տալ յաջորդ տարվայ համար, աւելի ոչինչ:

Գաւառական ներկայացումների աջողութիւնը այդ պատճառով ցանկալի է, թէ առհասարակ թատրոնական գործի զարգացման և տարածման տեսակէտից և թէ նոյն իսկ կենտրոնների թատրոնական գործի առաջադիմութեան և հաստատութեան տեսակէտից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Երէկ մենք կանգ առանք «Արարատի» աստուածաբանների այն ծրագրի վրա, որ առաջարկվում է «հաւատը վերակենդանացնելու» համար: Վերջին հինգ տարիները էջմիածնական հացաւէտ ասպարէզների վրա աչք տնկած մարդկանց համար պարզվեց, որ մեր հոգևոր դպրոցներում ուսումը աշխարհական է. հասկացան թէ ինչ «վտանգ» է եղել սպառնալիս այդ դրութիւնը Հայաստանեայց տիրացուների գրպանին և բարեկեցութեան: Ինչպէս հարկն էր, բարձրացաւ վայնասուն, որ տեղ հասաւ: Միմեանց ետևից հարուածներ թափվեցան դպրոցական ինքնավարութեան գլխին. երևան եկան «նշանակովի» հոգաբարձուներ, էջմիածնական ջոջերի փոքրաւորները տեսչութիւն էլ ստացան: Հոգևոր կառավարութիւնը, որ այնքան անընդունակ է մի բան ստեղծելու մէջ, շատ ժիր և եռանդոտ քանդող հանդիսացաւ: Էջմիածնական հացաւէտ ասպարէզներից փորի կուշտութեան ակնկալողները հրճվում էին, նրանց յաղթական քրքիջները արձակվում էին ամեն անգամ, երբ քանդվում, ընկնում էր գոյութիւն ունեցող ժողովրդական կարգերից մէկն ու մէկը: «Դպրոցը հոգևոր էր, պէտք է նրա կրթութիւնն էլ հոգևոր լինի»—այս էր նշանաբանը—և ոչինչ լսել չէին ուզում, ոչ մի հակաճառութիւն չէին ընդունում: «Արարատի» խմբագիրներն էլ մի-մի բարձրացնում էին այդ դրօշակը, երբ հարկաւոր էր լինում հրապարակով քնացնել, աչք կապել: Ցգէտ քահանաների հարց էր բարձրանում—իսկոյն պատրաստ էր աղաղակը՝ «Դպրոցը հոգևոր է» և այլն. կալուածների յափշտակութեան մասին էին խօսում, իսկոյն էջմիածնի պնակալէզները բղաւում էին՝ «Դպրոցը հոգևոր է»: Բանից դուրս է գալիս, որ հացաշատ ասպարէզների վրա թուխս նստածները այս ստէրէօտիպ նախադասութիւնից աւել էլ ոչինչ չը գիտեն: Ահա այժմ պէտք է կուրծք ծեծել, մազեր փետել, որովհետև ժողովրդի մէջ հաւատ չէ մնացել. և ճար համարվում է նոյն դժբաղդ դպրոցը, նոյն հոգևորը: Նշանակում է, որ յանուն Քրիստոսի հպատակութիւն պահանջողների այդ «վերակենդանացնող» բէցէպտի մէջ ոչինչ նորութիւն չը կայ. դա հարիւր ու հազար անգամ ծաժաված, ամենքին ձանձրոյթ պատճառած երգն է:

Եկեղեցին անկարող լինելով իր միջից նոր

Մի խօսքով, եթէ մէկը ուզում է չեխ բարձր դասակարգի կեանքից մի վէպ գրել, թող մուտք գործի այդ պալատը և կամ չեխական պերճ երկրում գտնվող այն չքեղ դղեակը, որի հիմնական, ամենահին բեկորները վերաշինվում և պահպանվում են խորին յարգանքով, իսկ նոր շինութիւնները կառուցվում են չեխական ամենայատնի ճարտարապետի ձեռքով, յիրաւի, շատ ընտիր ճաշակով: Երբ տեսնէք կոմսուհի Բօժէնին Սմետանի «Վաճառված հարսի» մէջ Մարժեկի (Մարիա) դերը կատարելիս ընտանեկան հաստատ բեմի վրա, ուր կոմսի ընտանիքը երբեմն հարևան ազնուականութեան հետ չեխական կօմեդիաներ և օպերաներ խաղալով ժամանակ է անցկացնում, կամ երբ տեսնէք նրան ծառաստանում, հազուագիւտ ծառերի շուքի տակ չեխական նորագոյն բանաստեղծութիւնների փառակազմ հատորի վրա երազելիս, արդարև, ձեր աչքերը կը լցվեն ուրախութեան և հիացման արցունքներով:

—Բաւ է, բաւ է այդ ձանձրալի յառաջաբանը,—անհամբերութեամբ ընդհատում էք ինձ:

—Աւելի լաւ է ասէք, ուր է գտնվում այդ դղեակը, ինչպէս է կոչվում այդ կոմսը և իր չքնաղ աղջիկը, որոնց անունները, ըստ քո պատմութեան, երախտագիտութեամբ և հպարտութեամբ արդէն վաղուց պիտի հնչվէին չեխական ամբողջ երկրում:

Ահա, յարգելի ընթերցողներ, այդ դղեակը իմ երևակայութեանս մէջ միայն գոյութիւն ունի,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՄՍՈՒՀԻ ԲՕԺԷՆԸ

(Սվէտոպոլկ Չեխից)

—

Ես դեմօկրատ եմ հոգով և մարմնով, նոյն իսկ արմատական, եթէ կամենաք, բայց կոմսունիզմի հետ ոչ մի կերպ չեմ կարող հաշտվել: Զէ որ, եթէ մարդկութիւնը իր ամբողջ կայքը եղբայրաբար բաժանէր, կոմսուհի Բօժէնին բաժին չէր հասնի և ոչ մինը այն մարդարիտներից, որոնք այնպէս գրաւիչ կերպով փայլում են նրա խարտեաշ—ոսկեգոյն մազերի մէջ: Իսկ դրա համար ես յիրաւի կափսոսայի:

Ճշմարիտ է, որ դաշտային հասարակ ծաղիկներն էլ գեղեցիկ են, բայց ճշմարիտ է և այն, որ մարդիկ, այնու ամենայնիւ, միշտ հրճվելու են պարտէզներում արհեստական կերպով մշակված հազուագիւտ բոյսերի գեղեցկութեամբ: Ուրեմն, չթի հագուստով հասարակ գեղեցկուհիների հետ մի շարքում դնենք նաև թաւշեայ և մետաքսէ շորերը խշխշացնող, հպարտ, բայց սիրելի ածարածներին, ի դէմս որոց կեանքի քացառիկ պայմանները կրթել են կանացի գեղեցկութեան ծաղիկը, այն եթերային պատկերները, որոնց ոտքերը իբր ողորմութիւն միայն կպչում են երկրին, որոնց ձեռքերը չեն կոշտացել աշխատութիւնից, որոնք չեն իմացել առօրեայ հացի հոգը և ապրում են միայն ոսկեզէնիկ բանաստեղծութեամբ. բանաստեղծների այդ մարմնացած իդէալները, որոնք հնարաւորութիւն ունեն իրականութեան մէջ պարուրվել փայլուն, կախարդական ղգեստների մէջ:

Դրանց մէջ ամենագեղեցկուհիներից մէկը կոմսուհի Բօժէնն է, և այդ չքնաղ ծաղիկը փթթել է հայրենի տոհմական այն ծառի վրա, որի արմատները խոր կերպով մտել են մեր ժողովրդի փառաւոր անցեալի մէջ և որի ոստիկները բազմաթիւ տերևներ են կրում փայլուն անուններով, որ մեր պատմութեան մէջ այնքան էջեր են գրաւում իրանց սէգ փայլով: Եւ եթէ երբեմն-երբեմն այդ ոստիկների հետ հիւսվում էին և օտար շառաւիղներ, որոնք մեր նախնիքների համար հրեղէն խարազաններ էին դառնում, այնու ամենայնիւ, ես ներում եմ կոմսուհի Բօժէնին այն արիստոկրատիական հպարտութիւնը, որով նա նայում է իր նախնիքների մեծապանծ շարքերի վրա: Ներում եմ նրա և այն փոքրիկ մնոտիապաշտութիւնը, որ նրա կերպարանքին տալիս է անցեալի, խաւար, բայց և բանաստեղծական միջնադարեան գիշերի թոյլ ստուեր:

Ներում եմ նրան այդ ամենը այն պատճառով, որ նա իսկական չեխուհի է: Եթէ ուզում էք իմանալ ամբողջ ներդաշնակութիւնն ու չքնաղութիւնը, որին ընդունակ է հասնել չեխերէն լեզուն, աշխատեցէք առիթ ձեռք բերել՝ լսելու այդ կոմսուհի Բօժէնի սիրալիր շրթունքներից: Վերլիցկու աղամանդեայ բանաստեղծութիւնները նրա վարդագոյն շրթունքների վրա—վեր են ամեն մի չքեղութիւնից, որին կարող է հասնել չեխերէն լեզուն: Ո՛չ մնոտի նախապաշարումները, ոչ կապերի բացակայութիւնը երբէք չեն փակում նրա դռները ձեր առաջ: Եղէք չեխ գիտնական, գրող, գեղարուեստագէտ, քանդակագործ, երաժիշտ,—հեշտութեամբ մուտք կը գործէք այդ գեղեցկուհու բնակարանը: Նրա մեծահոգի հայրը, որ մեր ժողովրդի քաղաքական կեանքում մեծ մասնակցութիւն ունի, աշխատում է յայտնի գործիչ լինել և՛ մեր գրականութեան, արտիստիական և հասարակական կեանքում: Այդ շրջանի իւրաքանչիւր առաջադիմական ձեռնարկութիւնը յանձին նրա գտնում է իր երկրպագուն և լիաառատ օժանդակիչը. նա երիտասարդ տաղանդաւոր դերասանների համար վեհանձն մեկենաս է: Հէնց որ մի տեղ երևում է չեխ գեղարուեստագէտի փառաւոր գործը, նա գնում է հանդիսանում. նրա պալատը և պարտէզները զարդարված են չեխ քանդակագործների արտադրութիւններով. նրա գրադարանում չէխական գրականութեան թանկագին պտուղներից և ոչ մէկը չէ պակասում: Նրա ընդունարանում թագաւորում է չեխերէն լեզուն, նրա բոլոր կառավարիչներն ու ծառաները չեխեր են և նրա կալուածներում բոլոր թղթակցութիւններն ու գրքերը չեխերէն լեզուով են պահվում:

Մի խօսքով, եթէ մէկը ուզում է չեխ բարձր դասակարգի կեանքից մի վէպ գրել, թող մուտք գործի այդ պալատը և կամ չեխական պերճ երկրում գտնվող այն չքեղ դղեակը, որի հիմնական, ամենահին բեկորները վերաշինվում և պահպանվում են խորին յարգանքով, իսկ նոր շինութիւնները կառուցվում են չեխական ամենայատնի ճարտարապետի ձեռքով, յիրաւի, շատ ընտիր ճաշակով: Երբ տեսնէք կոմսուհի Բօժէնին Սմետանի «Վաճառված հարսի» մէջ Մարժեկի (Մարիա) դերը կատարելիս ընտանեկան հաստատ բեմի վրա, ուր կոմսի ընտանիքը երբեմն հարևան ազնուականութեան հետ չեխական կօմեդիաներ և օպերաներ խաղալով ժամանակ է անցկացնում, կամ երբ տեսնէք նրան ծառաստանում, հազուագիւտ ծառերի շուքի տակ չեխական նորագոյն բանաստեղծութիւնների փառակազմ հատորի վրա երազելիս, արդարև, ձեր աչքերը կը լցվեն ուրախութեան և հիացման արցունքներով:

—Բաւ է, բաւ է այդ ձանձրալի յառաջաբանը,—անհամբերութեամբ ընդհատում էք ինձ:

—Աւելի լաւ է ասէք, ուր է գտնվում այդ դղեակը, ինչպէս է կոչվում այդ կոմսը և իր չքնաղ աղջիկը, որոնց անունները, ըստ քո պատմութեան, երախտագիտութեամբ և հպարտութեամբ արդէն վաղուց պիտի հնչվէին չեխական ամբողջ երկրում:

Ահա, յարգելի ընթերցողներ, այդ դղեակը իմ երևակայութեանս մէջ միայն գոյութիւն ունի,

կեանքի պահանջների համաձայն հոգևոր կրթութիւն արտադրելու՝ թոյլ է տուել, որ հոգևոր անուն կրող և հոգևորականներ պատրաստելու կոչված դպրոցներում աշխարհական կրթութիւն իշխէ: Իսկ այսպիսի կրթութեամբ մնված հրապարակախօսներ եկեղեցւոյ գործունէութիւնը քննադատելով՝ չեն կամեցել և չեն կամենում նաև այժմ հասկանալ, թէ կորեկ ցանած տեղում ցորեն հնձել չէ կարելի:

Մենք պէտք է ամենից առաջ վերականգնենք պատմական ճշգրտութիւնը: Հայ կղերականը երբէք թոյլ չէ տուել, որ իր դպրոցներում կրթութիւնը լինի բացարձակ աշխարհական: Վաթսունական թուականների սկզբում Շուշուց ահագին աղմուկով վռնդվում էր Պետրոս Շանշեանը, որովհետև վեղարաւորները և նրանց արբանեակները գտել էին, որ Շանշեանը բողոքականութիւն է դաս տալիս. այժմեան աստուածաբանները ամօթից դէպի դետինն են նայում, երբ յիշեցնում ես նրանց հայրերի այդ խայտառակ արարքը: Բայց կարող են ասել, թէ իրանց ժամանակակիցները պակաս եռանդոտ են այդպիսի քաջութեան մէջ: 1894-ին այժմեան ռէժիմը վրա հասաւ այն բօպէին, երբ նոյն Շուշում Յովհան մարգարէն չէր կարողանում ներս մտնել կէս «ձկան» փորը, որովհետև այդ «ձուկը» բնութիւնից մի անբևեկայելի փոքրիկ կոկորդ է ստացել: Եւ ահա ովկիանոսների թագաւորի այդ բնական պակասութեան պատճառով բարեկարգվող դպրոցը քանդվեց, աշխարհականների ձեռքից դուրս եկաւ, ընկաւ ասպարէզի միահեծան տէրերի ձեռքը: Հինգ տարի է, այնտեղ ձեր պաշտած մարդկանց ձեռքով ձեր պաշտած կրօնական կրթութիւնն է աւանդվում: Ի՞նչ արդիւնք էք ստացել: Հարցրէք Շուշու այն քաղաքացիներից, որոնք գնացին Վեհափառ Կաթողիկոսի մօտ և արժանացան նրա ուշադրութեան և «տեսնենք» բառին: Դիմենք ուրիշ օրինակների: Երկու թէ երեք տարի առաջ Բագուում թեմական դպրոց բաց անելու մասին էին մտածում. առաջին քարը դցողները դուք էիք, «Արարատի» դիպլոմաւոր սօֆեստներ. դուք էիք, որ երբ դեռ ոչինչ չէր սկսված դպրոցի բացման համար, կուրծք էիք ծեծում թէ վնաս է այդ դպրոցը, որովհետև հոգևոր կրթութիւն չը պիտի տայ: Չը գիտենք մինչև այժմ քանի անգամ էք կարմրել այդ վատ արարքի, այդ չարախօսութեան համար. հաւանական է, որ ոչ մի անգամ էլ կարմրած չը լինէք: Մի այլ օրինակ: Ներսիսեան դպրոցից ամեն օր մի խումբ քահանաներ են դուրս գալիս, ամենքն էլ կրօնուսոյց. այդ առատութեան վրա զարմացողին ասում են, որ կրօնուսոյցներին նշանակում է առաջնորդը առանց հոգաբարձութեան գիտութեան. աւելացնում են և այն, որ նոյն առաջնորդը լիազօրութիւն ունի իր կամքով վճռելու բոլոր հարցերը, եթէ հոգաբարձութիւնը համարձակվի համաձայն չը լինել նրա հետ: Կարելի է ասել թէ կրօնական կրթութեան մասին հոգ չէ տանվում:—Ի հարկէ, ոչ: Էլ ինչն է այդքան հոգեմաշ անում Էջմիածնի հացաւէտ ասպարէզների տէրերին: Մթթէ այն, որ այդ դպրոցներում աւանդվում է մի բուռն աշխարհագրութիւն, կէս բուռն բնական պատմութիւն, մի քանի բան պատմութիւնից և մաթեմատիկայից: Զենք ուզում հաւատալ, որ իսկ կոմսուհի Բօժէնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմ իդէալը, որին իրականութեան մէջ ես իզուր եմ որոնում: Իմ հոգեկան աչքերի առաջ նա երևում է որպէս մի որոշ, զարմանալի գեղեցիկ տեսիլ, որին մարմնական աչքերով իզուր եմ փնտռում: Բայց և այնպէս վերջ ի վերջոյ նրան գտնելու յոյսը ես չեմ կորցնում: Ես այնքան կարդում եմ չեխ ազնուականութեան մասին, որին մինչև անգամ մեզ թշնամի թերթերը «der tschechische Adel» են անուանում, լսում եմ, որ նա մինչև անգամ մեր ժողովրդական շարժման գլուխն անցած գալիս է մեզ հետ, «կայք և կեանք չը խնայելով» և էլի գիտեմ, որ մեր այդ չեխ ազնուականութիւնը մեծամեծ կալուածներ ունի և իր հարստութեամբ շատ է գերազանցում տեղական գերման ազնուականներին:

Բայց տարօրինակ բան: Չը նայած սաստիկ որոնումներիս, ես ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել այդ չեխ ազնուականութիւնը: Ես հարց ու փորձ արեցի գրականագէտներին,—նրանք այդ մասին ոչինչ չը գիտեն: Ես դիմեցի գեղարուեստագէտների ընկերութեանը, — նրանք ուղղակի ծիծաղեցին վրա: Ուշադրութիւն չը դարձնելով ծաղրին, ես շարունակեցի փնտռել և, վերջապէս, նրանց մէջ գտայ մի երիտասարդ գեղարուեստագէտ, որը մի քանի ազնուականների ուշադրութեանն էր արժանացած, բայց դժբաղդաբար, այդ ազնուականներն էլ գերմաններ էին: Ցուցահանդէսում երևան եկաւ ասպարէզի վրա այնքան պինդ նստածները այդ աստիճանին հասցնեն իրանց հոգու աղքատութիւնը: Ուրեմն, էլ ինչու է կրթութիւնը աշխարհական և ոչ հոգևոր: Ինքը, հոգևոր իշխանութիւնն է նշանակել դասերի թիւը և հոգևոր առարկաների թիւը այնքան առատ է, որ, ինչպէս պատմում են, հոգևոր դպրոցներից մէկում մի կրօնուսոյց քահանայ նոյեմբեր ամսին էր վերջացնում աստուածաբանութեան կուրսը և այնուհետև մինչև քննութիւնները շաբաթը երկու ժամ դասարանում պարապ մնացած աշակերտներն ու քահանան նստած էին միմեանց հանդէպ և միմեանց երեսին նայում: Ոչ, հոգևոր կրթութիւն տալը ոչինչ չէ բացատրում, միայն զարմանք է պատճառում: Հապա ինչու են «Արարատի» խմբագիրները այնքան կուրծք ծեծում: Նրանց չէ տուած պարզ խօսելու շնորհը, և մենք կարծում ենք, որ հեռու չենք լինի նրանց սրտից, եթէ ասենք, որ նրանք պահանջում են ոչ թէ հոգևոր կրթութիւն, այլ հոգևորների կրթութիւն: Այդ արդէն հասկանալի է շատ կողմերով. նախ և առաջ ստացվում է ասպարէզի ընդարձակութիւն, տէր լինելու աւելի մեծ հնարաւորութիւն և աւելի բարձրաստիճան հացաւէտութիւն: Պէտք է դուրս անել աշխարհական ուսուցիչներին և նրանց տեղ յայտնի տիպի ֆարաջաւորներ դնել. թէ չէ՝ ո՞վ գիտի, աշխարհականը մեղաւոր է, և գուցէ աշխարհագրութեան ուսուցիչը յանդգնում է հաւատալ, թէ լաւ էին վաթսունական թուականները, երբ «ընդհանուր աղատամտական ուղղութիւնն էր իշխում»: Իսկ սա արդէն մեծ վտանգ է սպառնում եկեղեցուն: Չը գիտեն այդ վտանգաւոր աշխարհականները, որ ասպարէզի հրամանատարները խիստ բարկանում են, ուստի «Արարատի» 284 երեսում բարեհաճել են դրոշմել այս միտքը.

> Բաւական է, որ մի միտք լուսաւոր լինի. ո՞վ է հարցնում այլ ևս, թէ որչա՞փ իրօք ճշմարիտ է այն, որչա՞փ իրագործելի մեզ տուած պայմաններում:

Ոչ ոք չէ հարցնում—և ահա Էջմիածնի աստուածաբանները—զուր չեն նրանք ասպարէզի տէր դարձել—կը սովորեցնեն, թէ ինչ է նշանակում չը հարցնել. աշխարհականների կրթութեան փոխարէն հոգևորների կրթութիւն, և այնուհետև լուսաւոր մտքերը այնքան հեշտութեամբ չեն գայ մեր մէջ, աստուածաբանները կիմանան, թէ որն է իրօք ճշմարիտ և որն է իրագործելի: Եւ վերջ ի վերջոյ կը ստացվի այն հետևանքը, որ ժողովրդի մէջ հաւատքը կը վերակենդանանայ:

Հրաշք է, հրաշք, ինչ ծրագիր: Մի յեռադիմական շարժումով կրթութիւնը տանել, հասցնել այն աստիճանին, երբ Յովհան մարգարէի կուլ գնալու մասին այլ ևս կասկած չի մնայ, ասպարէզատէրերի խնամքով հոգևորների կրթութիւն տալ հոգևոր դպրոցներում, ապա քահանաներ ձեռնադրել դրանց աշակերտներին—և «ամեն ինչ լմնցած է»: Այնքանը չեն ըմբռնում խեղճ աստուածաբանները, որ այդ քահանաները շատ հեռու կը լինեն ժամանակի պահանջից, որ հարիւրաւոր Հէրքուլէսներ էլ հաւաքվեն չեն կարող առաջադիմութիւնը խափանել, որ մարդու միտքը կանգ չէ առնում և երէկ—Բէնտգենեան ճառագայթները, այսօր հեռագիր առանց լարերի... Երէկ «Մասիսն» ասում էր թէ հոգևորականութիւնը յետ է մնում, մենք նրան կը թողնենք իր անշարժութեան մէջ, կատենք նրան ու առաջ կը գնանք: Զէ՞ք սարսափում այս նոր ձայներից, որոնք հնչում են մի այնպիսի ժամանակում, որ տոգորված է կղերական հակացողութիւններով: Այո՛, քարերն անգամ սկսել են աղաղակել, իսկ դուք դեռ երկար ու ձիգ մտածում էք թէ ինչ պիտի անէք, որ ձեր հին հակացողութիւններից ոչ մէկն էլ չը վնասվի, և դուք էլի ասպարէզի հրամանատար մնաք: Զուր ջանք, զուր երազներ: Վերակենդանանալ կարելի է նոր հիւթերով, նոր հիմքերի վրա: Ո՛ր դուք չէք վերակենդանանայ և չէք վերակենդանացնի ժողովրդի հաւատը—այդ պարզ ցոյց է տալիս ձեր կատաղի հնապաշտութիւնը, ձեր ֆանատիկոսական թշնամութիւնը դէպի ամեն մի անձ, որ «ձերը» չէ, ձեր աչ ու դողը թէ մի դուցէ ասպարէզը դուրս սահէ ձեր ձեռքից: Եւ դուք, խեղճ մարդիկ, կարծում էք թէ որ և է կենդանի գործ կը կատարէք և կը կենդանացնէք ժողովուրդը: Շատ և շատ զարմանալի կը լինի. ժողովրդի հաւատը ոչնչացրել էք և այժմ երազում էք վերստին կեանք տալ ձեր դոհին: Այդ անհնարին է. օրէնքի տեղ կամայականութիւն, ընդհանուրի օգտի տեղ նեղ թայֆայականութիւն, ամբարիշտ ինտրիգանութիւն, կատաղի ատելութիւն դէպի լոյսը, առաջադիմութիւնը, կաստայական բռնապետութիւն, արհամարհանք դէպի ձեզ կերակրող, ձեզ պահպանող ժողովուրդը—ձեզ վրա չէ երևում մի յատկութիւն, որ երաշխաւորէր թէ դուք, ճիշդ որ, բացի քանդելուց մի քանի պէտքական էք...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուլավէր, օգոստոսի 16-ին

«Մշակի» 144 համարում Շուլավէրից տպված նամակի մէջ «Շուլավէրցին» պախարակում է իր հայրենակիցներին՝ նրանց վատ սովորութիւնների համար, աւելով թէ նրանք կարտում են միմեանց վզները, այրում խոտի դէզերը և այգիների շրջապատերը, և այս բոլորի մեղքը, վերջ ի վերջոյ, տանուտէրի վզին է փաթթում: Մեղադրել հասարակութեան մեծամտութիւնը, որ նրան չէ ազողվում հեռացնել իրանից վնասակար անդամներին, այդ միանգամայն յանցանք է: Շատ փորձված մարդկանց կարծիքով, մեծամտութիւնը երբէք մեղաւոր չէ, մեղաւորն այն պաշտօնեաների լեգէօնն է, որոնք խրօնիքապէս աւերել են գիւղը և հասարակութեան ամեն մի իրաւունքը սեփականացնելով՝ այդ իրաւունքը ի չարն են գործ դրել:

1897—1899 թի յունվարի 1-ին, իմ տանուտէրութեան օրով, կտրտել են երեք այգիներում վազներ, այրել են մի խոտի դէզ և երեք այգիների շրջապատը: Շնորհիւ հասարակութեան ձեռք առած միջոցների՝ գտնվել են յանցաւորները և բաւականութիւն են ստացել վնասվածները, տալով ստորագրութիւն: Իսկ այս տարի մինչև այսօր կտրտել են վազներ 9 այգիներում, այրել են երեք այգու շրջապատներ, երկու խոտի դէզեր: (Նամակագիրը գրում է 50 այգի և Ղազարեանի 170-ի տեղ 400 վազը): Որովհետև նախկին ձեռք առած միջոցները ներկայ իշխանութեան օրով չեն թոյլատրվում, ուստի անցեալ տարի, դեկտեմբերի 18-ին, հասարակութիւնը ժողովվելով՝ առաջարկեց համախօսական կազմել այն մտքով, որ հասարակութիւնը եթէ յանցաւորներին չը գտնի, պարտաւորվում է վնասները վճարել: Հասարակութիւնը ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկը և տուեց այդ համախօսականը, որը № 941-ի տակ մտցրի ներկայացրի բարձր իշխանութեան ի հաստատութիւն, № 941 յայտարարութեամբ:

Բաւական ժամանակամիջոց անցնելուց յետոյ, այս տարի, յուլիսի 6-ին, տեղիս ոստիկանութեան միջոցով № 1198 գրութեան հետ ստացայ Թիֆլիսի պ. Նահանգապետից պատասխանը, որի մէջ գրում է. «Աւելորդ է միջնորդել բարձր իշխանութեան առաջ հաստատելու շուլավէրցիների համախօսականը, քանի որ նոյն ժողովուրդն արդէն ունի հաստատված համախօսական նոյն բովանդակութեամբ, որի պատճէնի պատճէնը ուղարկում ենք, որովհետև չը կայ իսկականը»: Ուրեմն միայն այս տարի յուլիսի 6-ին յայտնի եղաւ, որ մի այդպիսի համախօսական գոյութիւն ունի, որը ոչ մի տանուտէր ութ տարվայ ընթացքում չէ գործադրել, և պէտք է գործադրեմ ես:

Երկու անգամ փորձեցի ժողով կազմել, բայց չաջողվեց, որովհետև աշխատութեան ամենաթունդ ժամանակն էր: Խնդրեցի իշխանութիւնից հրամանագրել գործադրելու հին համախօսականը: Առաջին ժողովը այդ մասին տեղի ունեցաւ ամսոյս 4-ին, երկրորդ լիակատար համաժողովը՝ ներկայ ամսի 8-ին, ուր ներկայ էին աւելի քան 300 մարդ: Սկսվեց գործի քննութիւնը և ամբողջ հասարակութեան առաջ ուրվագծվեց, որ չարագործներից 6 հոգի միմեանց հետ կապ ունեն և գլխաւոր յանցաւորը շուլավէրցի չէ, այլ Թիֆլիսեցի, այստեղ ժամանակաւոր բնակվող: Համաժողովը վճռեց քանտարկել նրան և միւս յանցանքների մէջ մեղադրվող երկու շուլավէրցի ջահիլներին ու վճռեց կազմել առաջիկայ կիրակի երկու առանձին համախօսականներ, որովհետև առաջինը տեղացի չէ. իսկ եթէ ինչ-ինչ պատճառներով համաժողովին չը մասնակցեն օրէնքի համաձայն թւով մարդիկ, խնդրել գաւառապետից՝ հրամանագրել տանուտէրին՝ գործադրել հին համախօսականը, այսինքն ժողովել վնասները հասարակութիւնից: Ուրեմն ինչու է թոյլ տալիս նամակագիրը մեղադրել ինձ իր նամակի երկրորդ կէտում:

Ինչ վերաբերում է նամակագրի վերջին կէտին, որ իբր թէ հասարակութիւնը չը կարողացաւ յայտնել նահանգապետին իր ցաւերը, այդ էլ պոչաւոր սուտ է, որովհետև, ինչպէս երևում է, նամակագրի և իր ընկեր պաշտօնեների քունը անհանգիստ է եղել այն բօպէից, երբ նահանգապետը իր խորհրդակցի հետ եկաւ գիւղական կառավարութեան տունը և հաւաքելով ժողովրդին, քննեց տանուտէրի հաշիւները, տեսաւ սահմանած կարգ ու կանոնը, հարց ու փորձ արեց մանրամասնաբար և լսելով գիւղացիների ցաւերը, խոստացաւ աչքի առաջ ունենալ բոլորը, մանաւանդ ուշադրութիւն դարձրեց հարկաբաժնութեան վրա, և շնորհակալութիւն յայտնելով տանուտէրին, խրախուսեց աւելի եռանդով աշխատել, որպէս զի հարկը բաժանվի ըստ կարողութեան:

Շուլավէրի տանուտէր՝

Ե. Մեհրաբեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, օգոստոսի 14-ին

«Մշակ» լրագրի 146 համարում «Արիստ» ստորագրութեամբ Էջմիածնից մի յօդուած էր տրպված «Մարց» կալուածքի կառավարիչ նշանակելու մասին, և այդ յօդուածում ասված էր թէ «Վեհափառի շրջապատողներից և վեհարանի չէմքը մաշողներից մի երկուսը, ինչպէս ասում են, օգտվելով այն հանգամանքներից, որ Վեհափառը հաւատ ընծայելով իրան շրջապատողներին, ուր հնչէր չեխ լեզուն, ոչ մի աղջիկ, որ չեխերէն գրքեր կարդար, իսկ երբ ես աշխատում էի իմանալ, թէ այդ պարոնների տներում չեխերէն լեզուով ներկայացումներ չեն տրվում արդեօք, իմ հարցը սպասաւորների սեղանի շուրջը անդուսպ ծիծաղի մի ամբողջ պայթիւն առաջ բերեց:

Այսպէս ես մնացի ձեռնունայն: Բայց, ի սէր Աստուծոյ, ո՞ւր է չեխ ազնուականութիւնը: Ո՞ր տեղ է թաղնված նա: Սիրելի ընթերցողներից ոչ ոք չը գիտէ՞ նրա մասին: Եւ կամ գո՞ւցէ այդ ազնուականութիւնը միայն երևակայութեան արդիւնք է, ինչպէս կոմսուհի Բօժէնս:

Սրտումս մի յոյս ևս կայ: Երեկոյեան ես թողնում եմ Մրգեղէնի հրապարակի վրա գտնվող իմ համեստ բնակարանը և թափառում եմ գերմանական թատրոնի շուրջը, որի առաջ կանգ են առնում իշխանական զինադրոշմը դռների վրա կպցրած չքեղ կառքերի երկար շարքերը և վերոյիշեալ սպասաւորներն ու կառապաններն էլ նստած կառքի նստարանի վրա: Ազնուազարմ նժոյգները հարուստ սարքի մէջ՝ գեղեցիկ գլուխները բարձր բռնած, սմբակներով անհամբերութեամբ փորում են գետինը. անիւները ճռճռում են, կառքի պատուանդանի վրա երևում են կանացի երկնային պատկերներ, արիստոկրատիական դէմքերով... խշխշում են մետաքսէ զգեստները, փայլում թանգագին զարդերը և... հնչում են քաղցր, գերմանական ձայներ...

Փողոցով հեռանում եմ դէպի ժողովրդական մեծ թատրոնի նորաւարտ շինութիւնը: Հպարտութեամբ նայում եմ քարէ այդ վիթխարի, հրաշալի արձանին, այդ քարէ մուսաներին, որոնց գեղեցիկ պատկերները լողում են այնտեղ վերևում, լուսնի արծաթանման ճառագայթների մէջ, ճոխ կերպով զարդարած գլխաւոր մուտքերին և իմ հոգուս մէջ մի քաղցր երազ է սպրդում... Ես տեսնում եմ բազմաթիւ չքեղ կառքեր, որոնք միմեանց հրում են այդ փառահեղ մուտքի առաջ. նրանցից մինից մի չքնաղ ոտիկ դուրս է եկնում մարմարեայ աստիճանի վրա, իսկ այդ ոտին, ինչպէս մի սիլֆա, հետևում է աղջկայ հրաշալի կերպարանքը: Նազելի դէմքը խնդում է ձիւնանման փետուրներից հիւսած՝ ոսկեպատ հովհարի ետևից. իսկ մարմարի տակ ալիքանման ժողովված են կոմսուհի Բօժէնի խարտեաչ-ոսկեգոյն մազերը... Այդ երազի ազդեցութեան տակ անցնում եմ հոյակապ շինութեան ետևը և հասնում մինչև ժամանակաւոր փոքրիկ թատրոնը, որ լուսաւորված էր. նրա առաջ կանգնած էին անշուք, խունացած հասարակ կառքեր, որոնց մաշված կառապանները կամ ննջում են և կամ հայհոյում ու ձիերն էլ այնքան խեղճ ու նիհար, որ բոլոր անցորդների մէջ խորին կարեկցութիւն են զարթեցնում:

Մ. Եսայեան

րին, կոնդակների սեպագրութիւնը կազմելուց կամ կարդալուց յետոյ, նրանց մաքուրը ստորագրում է առանց կարդալու, խարդախում են Վեհափառի կոնդակը, մի կողմ թողնելով իսկական միտքը և մտցնելով նրա մէջը իրանց ցանկացածը...»

Որովհետև Վեհափառ Հայրապետի կոնդակները և դիւանապետ ես եմ և այդ յօդուած կարդացողը անշուշտ ինձ կը վերագրէ այդ յանդգնութիւնը, ուստի ես կը խնդրէի պ. Արիստին, հրապարակաւ, ազնուաբար յայտնել, թէ ո՞ւմն է ակնարկում «այդ շրջապատողներ կամ խարդախողներ» ասելով, ինձ թէ ուրիշներին, որ եթէ ես եմ, կարողանամ ինձ արդարացնել կամ պաշտպանել:

Կորիւն վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անդրկովկասեան երկաթուղիով վերջին շաբաթների ընթացքում փոխադրվում է մեծ քանակութեամբ բժժժ և մետաքս Պարսկաստանից դէպի արտասահման, գլխաւորապէս Մարսէյլի վաճառանոցը:

—

Պ. Կարա-Մուրզա տուեց դարձեալ երկու կոնցերտ կիրակի, ամսոյ 15-ին, Պուշկինեան ամարային այգում և երեքշաբթի, ամսոյ 17-ին, ամարային կլուբի այգիում: Մեր հասարակութիւնը ուրախութեամբ յաճախում է պ. Կարա-Մուրզայի համերգները:

—

Պետերբուրգի բորսայում ընդունվել են առուծախի համար Բագուի ձիաքարշի ընկերութեան ակցիաները, որ այժմ ստացել են հաստատ և ապահով գներ և «Բագուի նաւթային ընկերութեան» նոր բաց թողած լրացուցիչ ակցիաները:

—

Ինչպէս ենթադրել էինք անցեալ անգամ, նաւթի գինը բարձրանում է Վոլգայի գետեղերեայ քաղաքներում: Ցարիցինում կէրոսինը ծախվել է անցեալ շաբաթ 90½ կոպէկով պուդը, իսկ ապագայ պայմանաժամերով 90—91 կոպէկով: Նաւթային մնացորդները ծախվել են 18—23 կոպէկով պուդը: «Մազութ» ընկերութիւնը ծախել է 1½ միլիոն պուդ մնացորդ զանազան պայմանաժամերով 17½—18 կոպէկով:

—

Մերվից, պ. Ի. Տէր-Պողոսեանց, ուղարկել է մեզ տասը բուբլի, որպէս զի այդ փողը բաժանենք չքաւոր ընտանիքներին:

—

Գանձակի նահանգի Ղազախի գաւառի ԲԱՐԱՆԱ գիւղից մեզ գրում են, որ հանքատէրեր՝ ինժէներ Գրինեովի, Արէշեանի և Տէր-Խաչատրեանի երկաթի հարուստ հանքերը, որ գտնվում են չորս սարերի վրա, այն է «Էվնի Լղոց, Ճրմուտ, Լէգչու Կածան և Կոչման», այս օրերս ծախվեցին 150,000 ր.: Գնողն էր լեռնային ինժենէր Աբրամով:

—

ԲԱՆԱՆՑ գիւղից մեզ գրում են. «Մշակի» № 142-ի մէջ զետեղած տեղեկութիւնը Գանձակի գաւառի մի մասում եկած կարկտի ու հեղեղի մասին շտապ գրելով, հնարաւորութիւն չունեցայ հաղորդել այդ աղէտի մասին մի քանի կարևոր մանրամասնութիւններ, որոնց մասին տեղեկութիւն առայ յետոյ անձամբ գիւղական տանուտէրներից: Գուշղարա գետը քշել է մօտ 300 գլուխ եղջիւրաւոր կենդանիներ՝ գոմէշ, կով, եզը, ոչխար ու այծ: Խաչակապ գիւղի վնասը հասնում է ամենաքիչը 50,000 բուբլու, Փիբ գիւղինը 30,000 ր., Կիրանց գիւղինը 15000 ր.: Այդ թիւերը յիշեալ գիւղերի արդի թշուառութեան ամենապերճախօս ապացոյցներն են, ուստի աւելորդ ենք համարում մանրամասնութիւնների մէջ մտնել: Այդ գիւղերի ժողովրդին ձրմեռվայ ամիսներում սպառնում է թշուառութիւններից ամենասոսկալին—սովը. նա հէնց այսօրվանից ուտելու հաց չունի. բացի ուտելու հացից նրան շատ հարկաւոր է սերմացու՝ աշնանացանքների համար. որտեղից նա կարող է ճարել այդ՝ առանց կողմնակի օգնութեան: Ցիշեալ գիւղերի ժողովուրդը մտադիր է դիմել նահանգական վարչութեան ու օգնութիւն խնդրել այժմեան անտանելի կացութիւնից մի կերպ դուրս գալու համար: Պէտք է յուսալ, որ վարչութիւնը անուշադիր չի թողնի գիւղական ժողովրդի աղերսանքը ու որ և է ձևով կօգնի նրան: Մեր կողմից բարեգործ մարդկանց ուշադրութիւնն ենք հրաւիրում Խաչակապ, Փիբ ու Կիրանց գիւղերի ժողովրդի թշուառ դրութեան վրա: Շամխոր գետը, յուլիսի 29-ի հեղեղի պատճառով նոյնպէս դուրս գալով ափերից, մեծ վնասներ է հասցրել շրջակայ գիւղերին. մանրամասնութիւնները մեզ դեռ յայտնի չեն:»

—

Զիբրայէլի գաւառի ԱՌԱՔԵԼ գիւղից մեզ գրում են. «Թուրքերը կամաց-կամաց իջնում են սարերից: Նրանց «օքաները» կանգ առնելով այս կամ այն գիւղի հանդերում, լրացնում են երաշտից խանձված դաշտերի պակասորդը: Վընասներ են հասցնում գիւղացիներին, իսկ երբեմն, նոյն իսկ մեծ դժբաղդութիւնների պատճառ են դառնում: Օրինակ, մի քանի օր առաջ Ախալաղալու թուրքերի քոչը վեր էր եկել Միլքադարա հայաբնակ գիւղի արտերում: Գիւղացիները առաջարկել էին թուրքերին հեռանալ: Վերջիններս չէին լսել, ծագել էր կռիւ, որի ժամանակ մի թուրք՝ քարերի վէրքեր ստանալով գլխից, հետևեալ օրը մեռել էր: Այդ դէպքից յետոյ միլքադարացիները դարձել են թուրքերի «ղանլուները»: Չը նայած որ հայերից մի քանիսն արդէն բռնված են, թուրքերը չարունակում են գողութիւններ անել, այգիները փչացնել, մարդկանցը կողոպտել և այլն... Պատահած ժամանակ գնդակահարում են միլքադարեցիներին նրանցից մարդ սպանելու մտքով, որպէս զի յագեցնեն իրանց վրէժխնդրութեան ծարաւը: Մի քանի մարդիկ, հարևան գիւղերից, աշխատում են հաշտութիւն կայացնել: Այդ պատճառով թուրքերը պահանջում են սպանվածի ընտանիքի օգտին՝ 800 բուբլի փող, 1 բեռ բրինձ, երեք ոչխար, իւղ, ալիւր և այլն... Ամեն կողմից թուրքերով շրջապատված հայերը կամայ ակամայ պիտի համաձայնվեն վճարել այդ բոլորը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, օգոստոսի 4-ին

Օգոստոսի 2-ին առաւօտեան, դեռ լոյսը հաստատ չը բացված, Ռաշտի պարսիկ ժողովուրդը, հակառակ իր սովորութեան, փոխանակ դէպի բազար, դէպի խանութ վազելու, մեծ ու փոքր, հոգևորական թէ աշխարհական, հարուստ թէ աղքատ, մինչև իսկ դէրվիշների և ֆարաշների խումբը վազում են դէպի Թէհրանի ճանապարհը: Քաղաքում տիրում է մի խլրտում, մի իրարանցում: Արևը բաւական բարձրացել է երկնքի վրա և ամարային արեգակը թափում է իր ջերմութիւնը՝ այրելով և խանձելով բուսականութիւնը, բայց Ռաշտի խանութները այսօր չեն բացվում, չը նայելով որ օրը ոչ ուրբաթ է և ոչ պարսկական մի մեծ տօն: Քաղաքի փողոցներից անընդհատ չափ գցող և սրընթաց գնացող կառքերի, էշերի և ձիաների երթևեկութիւնը և փողոցային լակոտների ճիչն ու աղմուկը անծանօթ մարդուն մի փոքր շփոթութեան առիթ են պատճառում: Բայց ոչ, հարկաւոր չէ շփոթվել. պարսիկ ազէտ ամբոխը այսօր պատրաստվում է դիմաւորել իր հոգևոր պետին՝ Շարիաթ-Մադարին, Ռաշտում սրանից վեց ամիս առաջ տեղի ունեցած խռովութիւնների սկզբնահօրը, որը կանչված էր Թէհրան խնդրի քննութեան համար:

Դեռ երեք օր առաջ, երբ պարսիկ ժողովուրդը լսեց նրա գալու լուրը, էլ քաղաքում ոչ կառք մնաց, ոչ ձի և ոչ էշ, իսկ մնացած ամբոխը ահա այսօր, չը նայած անտանելի շոգին, զանազան ընծաներով և ոչխարներով դիմաւորեց նրան, տարածվելով նրա ձիու ոտքերի տակ: Մէկը ոտքն էր համբուրում, մէկը ձեռքը, միւսը ձիու բաշը, չորրորդը շորերի քղանցքը, մի ուրիշը ոչխարը վայր դցած՝ նրա ոտքի տակ մատաղ էր անում:

Թէ ինչպէս քննվեց ճանապարհային պահակոցի դէմ յարուցած խռովութիւնների խնդիրը, մանրամասնութիւնը մեզ մնաց անյայտ, բայց այսքանս յայտնի է, որ վեց ամիս հաստատ բանտարկված մնաց այնտեղ և, որ գլխաւորն է՝ պարսկական արդար դատարանի հաստատ վճարեց մի քանի հաղարներ, ոչ որպէս տուգանք, այլ որպէս ընծայ: Շատերը կարծում էին, որ նրա գալու ժամանակ ամբոխը կը սկսի յուզվել պահակոցի դէմ, երբ այդտեղից անցնելու ժամանակ ճանապարհորդներից կը սկսեն փող պահանջել: Ուստի ընկերութիւնը նախապատրաստական միջոցներ էր ձեռ առել այդպիսի դէպքում պաշտպանելու պահակոցը ամբոխի յարձակումից: Սակայն ամեն բան խաղաղ անցաւ: Կոյր ժողովուրդը շատ բան է սպասում նրանից. առ այժմ ամենից շատ նա անձրև է ուզում, որի բացակայութեան պատճառով բրնձի բոլոր արտերը փչացել են, ծառերը՝ պտուղները վրան, չորացել և տերևաթափ են եղել, և ահա նրա աղօթքին և գալուն էին սպասում: Բայց անիրաւ երկինքը խուլ է, ոչ նրա և ոչ միւսների աղօթքը չէ լսում: Այս երկու օր է երկինքը ամպամած է, բայց անձրևի ոչ մի կաթիլ չէ թափվում:

Գարսից Շահերը սովորութիւն ունեն «խալաթ» տալ այս կամ այն նահանգապետին, նայած թէ որն է հաշտուստ և որից աւելի մեծ գումար կարող են կորզել: Այդ խալաթները լինում են սովորաբար յայտնի «թիրժայ» շալից կարած մի կապայ, որի արժէքը եթէ 300 կամ 400 բուբլի է, ստացողի վրա նստում է մի քանի հազար բուբլի: Չը հաշուելով այն ընծան, որ նա պիտի ուղարկի Շահին, նա մի շօշափելի գումար պէտք է տայ խալաթ բերողին, նոյնպէս և իր միւս ստորադրեալներին: Խալաթ հագնելը ևս ունի իր ծէսերը: Խալաթ հագնում են սովորաբար քաղաքից դուրս որոշված տեղում և ապա հանդէսով մտնում են քաղաք, ուր դիմաւորում են շնորհաւորելու մեծամեծները, ատիճանաւորները և ապա լինում է նուագածութիւն և թնդանօթաձգութիւն: Մեր նահանգապետը անցեալ շաբաթ ստացաւ այդպիսի մի խալաթ և սովորաբար հագնելու տեղը, որ խալաթ-փուշան է կոչվում, անցաւ և ի պատիւ ընկերութեան խալաթը հագաւ ճանապարհային պահակոցում (Похитоновская застава), ուր և պատրաստված էր մրգեղէնի սեղան:

Տօթը անտանելի է. քաղաքի հորերի ջրերը ցամաքել են, այնպէս որ ջուրը փողով են ծախում:

Հայ-օրիորդաց դպրոցի շինութիւնը աւարտվել է համարեա, միայն կար ու ձևի վարժուհի դեռ չէ վարձվել մինչև այժմ:

Այս ամիս լինելու է Էնզէլի-Թէհրանեան ճանապարհի պաշտօնական բացումը, թէև բոլոր պահակոցների շինութիւնները դեռ պատրաստ չեն. կարծում են, որ թէ պահակոցները և թէ կամուրջները սեպտեմբերին վերջնականապէս պատրաստ կը լինեն:

Շուտով սկսվելու է Աստարայից մինչև Թէհրան նոր հեռագրալար անցկացնելու գործողութիւնը: Այդ գործի համար կառավարութեան կողմից որոշված պաշտօնեան արդէն եկել է և գործի նախապատրաստական միջոցներին է ձեռնարկել:

Նամակս վերջացրել էի, որ մանրամասն անձրևը սկսեց տեղալ և բնութիւնը կենդանացնել. արդարացաւ պարսիկ ամբոխի յոյսը, որն ասում էր՝ թէ Շարիաթ-Մադարի գալով՝ անձրև ևս կը գայ, և այդպէս էլ եղաւ... Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Figaro» լրագրում օգոստոսի 6-ից (18) տրպված է հետևեալ յօդուածը. «Պարիզի աւստրիական դեսպանատան խորհրդական կոմս Պ. Էստէրհազի, որը ժամանակաւորապէս վարում է աւստրիական դեսպան Վօլկենշտէյնի պաշտօնը, վերջինիս բացակայութեան պատճառով, յանձնարարել է մեզ վաւերական ճանաչել զինուորական կցորդ Շնէյդերի այն հեռագիրը, որը լոյս տեսաւ մեր լրագրում, և որի մէջ նա կեղծ է համարում այն հեռագիրը, որը իբրև են վերագրում և որը գեներալ Մերսիէ հաչակեց Լէննի դատարանի առաջ:»

—«Independance Belge» լրագիրը ասում է, թէ չը նայած այն հանդամանքին, որ Դրէյֆուսի անմեղութիւնը ակնյայտնի է ամենքի համար, այնուամենայնիւ զինուորական դատարանը նրան յանցաւոր կը ճանաչի: Զինուորական դատաւորները չեն համարձակվի Մերսիէ, Բուադէֆր և Գոնզ գեներալների հրամանները չը կատարել: Միայն մի ելք կայ խուսափել այդ խայտառակ վճռից—հրատարակել այն դոկումենտները, որ Էստէրհազին յանձնել է Շվարցկօպէնին: Մինչև այժմ Գերմանիան Դրէյֆուսի գործում իրան չէզոք էր պահում: Նա ֆրանսիական միևնարների յանդուգն պահանջներին՝ չը հաւատալ Մինիստէրին, Հօհէնլօհէին և Բիւլովին, լռութեամբ էր պատասխանում: Բայց այժմ, երբ Մերսիէ և Բօժէ իրանք են դիպչում օտարերկրեայ զինուորական կցորդների պատիւին, հասել է արդէն խօսելու ժամանակը: Եթէ Գերմանիան այժմ էլ լռէ, այն ժամանակ ամբողջ աշխարհը կասէ, որ նա հանգիստ կերպով թոյլ է տալիս դատապարտելու մի անմեղ մարդու:

—«Berl. Tageblatt» լրագրի Կ. Գոլցի թղթակիցը հաղորդում է, որ ընդհանուր խօսակցութեան առարկայ է այն հանդամանքը, որ թիւրքաց չորս դեսպաններ եկել են Կ. Գոլցիս և հինգերորդն էլ սպասվում է: Թէպէտ և պալատում մի փոքր վախեցած են հայերի և երիտասարդ թիւրքերի պրօպագանդայից, բայց միայն այդ հանդամանքը Կ. Գոլցիս չէր բերի բոլոր դեսպաններին: Այդ պատճառով դեսպանների գալու պատճառը համարում են ֆինանսական դժուարութիւնները: Մի քանիսները ենթադրում են, որ շուտով կը փոխվի թիւրքաց կառավարութեան բէժիմը:

—Դրէյֆուսի միւս պաշտպան՝ Դէմանժ մի քանի սպառնական նամակներ է ստացել: Այդ նամակներից մէկի մէջ ասված է, թէ նա չէ կարող վերջացնել իր պաշտպանողական ճառը, որովհետև նրա ճակատագիրն արդէն որոշված է: Դէմանժ այդ նամակները ներկայացրել է Լէննի ոստիկան Վիդէլին:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

17 օգոստոսի

ՐԷՆՆ: Նիստը բացվեց 6 ժամ 30 բոպէին: Ներկայ է հասարակութեան ստուար բազմութիւն: Ներս է կանչվում խուզարկու բիւրօի նախկին կառավարիչը: Նա վկայում է, թէ Բուրժում դոկումենտների անհետանալը, իր կարծիքով, չէ կարելի վերագրել Դրէյֆուսին: Ինչ վերաբերում է գլխաւոր շտաբից նրանց անհետանալուն, այդ մասին մինիստրութիւնը յայտնել է, թէ նրան մատնացոյց են արել մի անձնաւորութեան վրա, որի նշանները աւելի նման էին Էստէրհազիին, քան թէ Դրէյֆուսին: Դրէյֆուսի մասին ժողոված տեղեկութիւնները այնքան անենպաստ չէին, ինչպէս նրանց մասին խօսում էին: Պիկարի հետախուզութիւններից յետոյ վկան բոլորովին հաւատացած է Դրէյֆուսի անմեղութեան մէջ:

Դրէյֆուս, նախագահի հարցին, պատասխանում է, թէ թելադրութեան տեսարանը, որ կատարվեց ձերբակալութիւնից առաջ, այնքան երևակայական էր, որ երբ ինքը դուրս եկաւ, իր գլուխն սկսեց պտոյտ գալ. այդ պատճառով էլ անկարող է մտաբերել մանրամասնութիւնները:

Բօժէ առարկում է Կօրտիէի և Ֆրէյշտէտերի ասածներին մինիստրութիւնից դոկումէնտները անհետանալու ժամանակի վերաբերմամբ: Նրա խօսքով, անհետանալը, որ նկատվեց Դրէյֆուսի ձերբակալութիւնից յետոյ, վերաբերում էր անչնչան դոկումէնտներին: Աւելի նշանաւոր դոկումէնտները անհետացել են Դրէյֆուսի ձերբակալութիւնից առաջ:

Կանչում են Ֆրէյսինէին: Նա ցոյց է տալիս, թէ մայիսի սկզբում եկաւ իր մօտ Ժամօն և նրանք խօսում էին այն արշաւանքի մասին, որ սկսել է օտարերկրեայ մամուլը Դրէյֆուսի գործի վերաբերմամբ: Ֆրէյսինէ այդ ժամանակ ասեց. «Մեր գործակալները եռանդ ցոյց տուին այդ արշաւանքի օգտին»: Ֆրէյսինէ աւելացնում է. «Այդ արշաւանքը, ի հարկէ, շատ անշահասէր է Ֆրանսիայում, բայց, անպայման, պակաս անշահասէր է արտասահմանում»: Ապա Ֆրէյսինէ հաղորդեց Ժամօնին մամուլի հարցերի հետ ծանօթ մարդկանց կարծիքները: Այդ կարծիքը վերաբերում էր ոչ թէ այդ գործի հետ կապված ծախքերին, այլ այն ընդհանուր շարժման, որը նկատվում էր ամբողջ աշխարհում նրա օգտին: Վկան աւելացնում է, թէ Ժամօնի հետ խօսակցութեան ժամանակ երկիւղով էր վերաբերվում, որպէս զի զօրքի վրա յարձակումները չը թուլացնեն կարգապահութիւնը և զինուորների հաւատը դէպի իրանց մեծաւորները: Վկան յուզված աղաչում է նրանց, որոնք մասնակցում են յարձակումներին, դադարեցնել նրանց, որովհետև այդ յարձակումները Ֆրանսիայի վարկը վայր են դցում նրա հետ մրցողների աչքում: Դատավճիռը պէտք է ընդունել յարգանքով և լռութեամբ: Վկան ցանկանում է, որ այդ դատավճիռը բանայ անհրաժեշտ հաշտութեան նոր դարագլուխ: (Երկարատև շարժում): Պատասխանելով դատարանի անդամներից մէկի հարցմունքին, Ֆրէյսինէ ասում է, որ նրա դերը, որպէս զինուորական մինիստրի, սահմանափակվում էր միայն նրանով, որ կատարում էր կառավարութեան որոշումները, երբ քարձրագոյն դատարանը գործի վերաքննութիւնը վճռեց: Դէմանժի հարցին Ֆրէյսինէ կրկնում է, ինչպէս ասել է պատգամաւորների ժողովի առաջ, որ մեծ մասամբ անյարմարութիւնները, որոնք կարող են ծագել մերկացումներից, այնքան նշանաւոր չեն. իսկ ինչ վերաբերում է զօրքերին, զինուորութիւններին կամ պայթող նիւթերին, նրանք շատ վտանգաւոր են: Պատասխանելով Լաբօրիին, վկան ասեց, որ ինքն ոչ մի փաստ չը գիտէ, որից կարելի լինէր եզրակացնել, թէ օտարերկրեայ փողերը որ և է դեր են խաղացել 1894 թւի դատի վերաքննութեան մէջ: Նախագահը հրաժարվում է հարցնել վկային այն բանի մասին, թէ ինչ է կարծում նա Շէրէր—Կեատնէրին, Տրարիէին, Բանկին և վճռաբեկ ատեանի անդամներին կաշառելու մէջ մեղադրելու վերաբերմամբ: Նախագահը մեղադրում է Լաբօրիին այն բանի համար, թէ նա ցանկանում է կիրք մտցնել վիճաբանութիւնների մէջ:

Գալլիշէ, «Drapeau» լրագրի խմբագիրը, հաղորդում է Կօրդիէի խօսքերը՝ «Մենք բռնեցինք Դրէյֆուսին յանցանք գործելու միջոցին:» Կօրդիէ պատասխանում է, թէ յետոյ փոխեց իր կարծիքը: Էկսպէրտ Բէլիօմ, ինչպէս և Կուար և Վերնար Էստերհազիի դատի ժամանակ,

պնդում էր, թէ Էստէրհազին չէ գրել բօրդերօն։ Դրէյֆուսի ձեռքի մասին նա ոչինչ չէ կարող ասել, որովհետև բաւարար կերպով չէ ուսումնասիրել նրան։

Նիստը փակվեց։

ԲԵՐԼԻՆ։ Պրուսական սէյմի վերջին նիստում Հօհենլօէ ասեց, որ կառավարութիւնը չնորհակալութիւն է յայտնում սէյմին դրա անձնուէր աշխատութեան համար, բայց, միւս կողմից, խորին կերպով ցաւում է, որ նախագիծը չարժանացաւ պատգամաւորների հաւանութեան։ Անյաջողող կերպով հաւատարիմ մնալով այդ մեծ գործին, կառավարութիւնը վստահութեամբ սպասում է, որ անհրաժեշտութեան այդ համոզմունքը աւելի խորը արմատներ կը դցի ժողովրդի մէջ, և եկող նստաշրջանին կառաբութեան կաջողվի համաձայնութիւն կայացնել պատգամաւորների ժողովի հետ։ Ապա նստաշրջանը փակված յայտարարվեց։

18 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական քարտուղար սենատոր ստատս-սեկրետար, իսկական գաղտնի խորհրդական ֆօն-Պլէվէ նշանակվում է Ֆինլանդական մեծ իշխանութեան մինիստր ստատս-սեկրետարի պաշտօնակատար, մնալով պետական քարտուղար։

ՊԱՐԻԶ։ Դատաստանական քննիչը այսօր ձերբակալեց «Petit Journal» լրագրի խմբագիր Լիսաժուին, որը «Eclair» լրագրին տեղեկութիւններ է հաղորդել այն յօդուածի համար, որ հրատարակվեց 1896 թուին «այդ անասուն Դրէյֆուս» խօսքերով, որի համար «Eclair» լրագիրը դատի է ենթարկվում։ Գործակալը կատրեց Սաբատիէի և Մօնտորգէյլի քնակարանների վրա դրած կնիքը և նրանց մէջ խուզարկութիւն կատարեց, բայց առանց՝ հետևանքի։ Սաբատիէ և Մօնտորգէյլ քննիչի մօտ գնացին, որը առաջարկեց նրանց իր կարգադրութեան տակ մնալ և յայտնել իրանց ապագայ բնակութեան տեղի մասին։ Լիսաժու քննիչի մօտ հրաւիրվեց և հարցուփորձից յետոյ կալանաւորվեց։ Գործակալը Լիսաժուի քնակարանում խուզարկութիւն կատարեց, բայց անպտուղ։

Պարիզի զինուորական դատարանի կառավարչական գործակալը հարց ու փորձի ենթարկեց հիւանդ Պատի-դը-Կլամին, Դէվանժի ներկայութեամբ։

Շաբաթ փողոցում ամեն ինչ շարունակվում է առաջվան պէս։

ԿԱՆՆ։ Հակասէմիտական երիտասարդութեան լիգայի նախագահ Լէֆեվրի քնակարանում խուզարկութիւն կատարելու և այդ ժամանակ թղթեր գտնելու պատճառով, Լէֆեվր ձերբակալվեց և կուղարկվի Պարիզ։

ՕՊՕՐՏՕ։ Այսօր ժանտախտի երկու լուրջ դէպքեր կային։ Երկաթուղիներով ապրանք ուղարկելը նորից թոյլատրվեց, այն պայմանով միայն, որ ախտահանութիւն կատարվի։

ԲԵՐԼԻՆ։ Կայսերական կանցլէր Հօհենլօէ այսօր երեկոյեան ճանապարհ ընկաւ կարճ ժամանակով իր Վերկի կալուածքը—Ռուսաստան։

ԲԵՐԼԻՆ։ «Köln. Zeitung» լրագիրը գրում է. «Հաստատվում է, որ Տրանսվալի բօէրները Լօնդոն ուղարկած իրանց վերջին յայտագրի մէջ պահանջում են, որպէս հակակշիռ իրանց ապագայ զիջումների, որ Անգլիան հրաժարվի իր գերագոյն իրաւունքներից Տրանսվալի վրա։ Եթէ Կրիւգէր, որը մինչև այժմ խոհեմ և խելօք մարդ էր համարվում, յանդգնանում է այն աստիճան, որ այդպիսի պահանջներ է դնում, պէտք է այն ժամանակ լուրջ կերպով ընդունել, որ նա խելագար է և այն պատերազմի ժամանակ, որ կը ծագի բօէրների այդ պահանջների պատճառով, Տրանսվալը բարոյապէս կը թողնեն ամենքը, և ոչ ոք մատը չի շարժի՝ այդ անխոհեմ պետութեան քայքայումը կանգնեցնելու համար»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսօր, հինգշաբթի, օգոստոսի 19-ին, Նորին Մեծութիւն Թիւրքաց Սուլթան Համիդ II-ի գահակալութեան տօնի առիթով, Թիֆլիսի ընդհանուր հիւպատոսարանը կընդունի Թիւրքաց կօլօնիային ցերեկվայ երեք ժամից յետոյ։ 1—1

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ

խնդրում է նորակազմ խմբի անդամներին, տիկիններին, օրիորդներին և պարոններին չնորհ բերել այսօր, ամսոյս 19-ին, երեկոյեան 6 ժամին «ԷՐՄԻՏԱԺ» ԱՅԳՈՒ ԱՄԱՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ, չորրորդ կօնցերտի ծրագիրը փորձելու և նոր պայմանների մասին խօսելու։ Կրկնողութիւն լինելու է ընդամենը երկու անգամ։ 1—1

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Եկիսավետեան փողոց, տ. № 86. տէլէֆօն № 506։ (Հ.) 35—45

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ,—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Դ. ԳՈՒՐԿՕ—1½—2 ժ. ներքին և միաբեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՕՎ—6½—7½ ժ. վիրաբուժական հ.։
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խրխի, արեան, կղմի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—պարապում է տանը ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
15—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԷՐՑՖԷԼԴ
Մաղերեան փողոց, № 5.
որ ժամանդէտ է կաչու, միզասեռական (էլեկտրականութեամբ), վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
Ընդունում է հիւանդներին ամեն օր
Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 5—8 ժ.
26—60

ԵՐԵՒԱՆԻ Թեմական հոգեւոր դպրոցի բարձր դասարանների համար հարկաւոր է մէկ համալսարանաւարտ ռուսերէն լեզուի ուսուցիչ՝ շաբաթական 22—27 դասով, դասագինը քառասնական (40) ռուբլիով։ Ցանկացողները պէտք է դիմեն նոյն դպրոցի հոգաբարձութեանը, ներկայացնելով իրանց ուսման վկայագիրը։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ սեպտեմբերի 8-ին, ցերեկվայ ժամի 1-ին, վարչութեան ատեանում նշանակված է աճուրդ կապալով տալու քաղաքային սիները աֆիշներ կպցնելու համար։

Պայմանները կարելի է տեսնել ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 9 ժամից մինչև 12։ 1—3

Վաճառվում է ապրեկ. և արքիւմ. խանութներում։

М. (9646) 14—14

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ 1899 թուի սեպտեմբերի 7-ին, ցերեկվայ ժամի 1-ին, Վարչութեան քընակարանում նշանակված է աճուրդ կապալով տալու, երեք տարի ժամանակով, Վերայի կամուրջի հասոյթի ժողովելը։

Պայմանները կարելի է տեսնել Վարչութեան սէջ ամեն օր, բացի կիրակի ու տօն օրերից, առաւօտեան ժամի 9-ից, մինչև 12։ 1—3

Շարունակում եմ ժողովել թէ չամախցի «Զարկեաբ» մականունով բանաստեղծի և թէ Նուխու գաւառի, Դաշբուլաղ գիւղացի, յայտնի Աշըղ-Փօնիի ասածները, որոնք և տըպագրվելու են առանձին-առանձին։

Ձեռնտաս մարդկանց խնդրում եմ ուղարկել ինձ յիշեալ անձանց ասածներից, այն է՝ նրանց բանաստեղծութիւններից, երգերից, բայաթիներից, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, въ Баку. Այդ աշխատութիւնները լոյս տեսնելու մասին կը յայտնեմ իր ժամանակին, յայտարարութեամբ։ 2—2

Ի. Դ. ՍԱԼՏԻԿՕՎԻ
ԱՐԾԱԹԵԱՅ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ՝
Москва, Земляная ул. близъ Серпуховской заст. свой домъ.

Ծախվում են բաւականաչափ էժանացրած գներով զանազան արծաթեայ իրեղէններ, որոնք մնացել են խանութը փակելուց յետոյ. սերվիզներ, գինու բաժակներ, պօրտսիգարներ, անձեռոցիկների օղակներ, գրասեղանի իրեղէններ և զանազան գեղեցիկ իրեղէններ պարգևների համար։ Պատուէրները կատարվում են ճշդութեամբ և խղճմտանքով, իսկ վաճառականների համար մեծ զիջում։ Նմուշի համար փայլուն՝ և էմալի հասարակ ապրանքները ուղարկվում են վերադիր վճարով։ Бен. 22486։ 1—3

ԲԱԳՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻ

Ընդունվում են երեխաներ գիշերօթիկ և երթևեկ պատրաստվում են գիմնազիօն բէալական և այլ դպրոցներ մտնելու համար։ Պայմանների համար դիմել Баку, Старо Почтовая улица домъ Гаджи Неймата. (Ե. Հ. 2.) 5—10

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ
ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹՈՒՄ
Սկսել է իր գործունէութիւնը,
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ՝

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոդէկամոսների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բաքուի համար հարկաւոր գործիքներ։

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը յանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի-Հէյբաթում։

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի դրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելօվի, տէլէֆօն № 749), գործարան. տէլէֆօն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆօն № 451. (Ե. Հ. 2)

ԿԵՕԼԵՐԻԱՆ ՀՕՏԱՒԵՏ ՍԵՂԱՆԻ ՄԱՆԱՆԵԽ

փոշի դարձրած, բոլորովին պատրաստ շուտով մանանեխ պատրաստելու համար, գերազանցում է իր հոտով, համով և էժանութեամբ դրա նման բոլոր արտադրութիւններից։ Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ ԵՒ ԲՈԼՈՐ յայտնի վաճառականների մօտ։
М. 75287 (6)

Մանկական Պարտէզ-Ռուսումնարան եւ Պանսիօն
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԲԱԳՈՒ

Ընդունվում են երեխաներ և պատրաստվում օրիորդաց և տղայոց գիմնազիայի, բէալական դպրոցի և այլ ուսումնարանների համար։
Մանկական Պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տ.) Ֆրեբելեան սիստեմով։
Ընդունվում են գիշերօթիկ և կիսագիշերօթիկ երեխաներ։ 4—15

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, (1/3 սեպտեմբերի) ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխովի և Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. և Ի. Մելիք-Ֆեանոներին, Նարերեժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենսօղերին։ (Ե. Հ. 2.) 11—20

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Августа 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.